


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ե. ԹՈՐՕՏՏԻԱՆ

Նամակ կամ որ եւ է
դրուած իւր կէտքէ ուղղել աս
Տեղիւն ԱՐՇԱԼՈՅՍ րազրի
ԳԱՂԻՐԷ (Եգիպտոս)



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՂԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Երկարացում	60
Վերջնական	35
ՕՏԱՐ ԵՐԿՐԵՆԵՐ	
Տարեկան	20
Վերջնական	12

ԲՍԺԱՆՈՐԿԱՎԵՐԸ ԿՍՆԵԻԿ
Եւ թղթատարի ծախքը
հոկտեմբերու վրայ է :

Խոկտեմբերու ուղղուած
գրութիւնք և՛ ց'են տրուի :

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ
Կանխիկ վճարելի են

E. TOROSSIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHALOUYCE
LE CAIRE (EGYPTE)

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ ԵՒ ՓՐՕ
ԱՐՄԵՆԻԱ

ԿՈՉ ԵԳԻՊՏԱՆՍՅՈՅ

Փրօ-Արմէնիա կը շարունակէ պայքարիլ խրոխտ ու հաստատակամ : Համակրութեան եռանդը որ կը պարզուի և մարտնչական ուժը որ կը կիրարկուի ի նպաստ հայկական դատին , ի յայտ կուգան հոն՝ այնպիսի աստիճանով մը որպէս երբէք չէինք տեսած Եւրոպայ մէջ յորմէհետէ անմահ ու մեծ ծերունին լռեց յաւիտեան :

Նպատակը զոր այս հանդէսը առաջադրած է իրեն՝ այնքան օգտակար է որքան վսեմ : Անշուշտ , ազգային ըզմանքներուն ամբողջական ու մտաբար իրականացումը չէ որ ան կը խօստանայ մեզ : Չափազանց պահանջել պիտի ըլլար զայդ սպասել անկեց : Բայց ատով նուազ ստոյգ չէ թէ ան կոչուած է իրական օգտակարութիւն մը մատուցանելու : Հայկական Հարցին :

Իրերու արդի վիճակին մէջ , այս ահաւոր խնդիրը կը ներկայանայ այսպէս : Երբեք ըլլալով մէկ կողմէն՝ ներքին ինքնակամ ու բնորոշ ռուսներու և առաջադրեալ անհրաժեշտ նպատակին մինչև տիրող բացարձակ անհամեմատութիւնը , և միւս կողմէն՝ ընդհանուր Եւրոպայի բարի կամքին պակասը՝ ընկերացած որոշ պետութեանց թշուառութեան , որն է այն միջինը որ պիտի հաշտեցնէ անկարելիութիւնները և առաջնորդէ նպատակին :

Առաջին անգամէն , մէկէ աւելի սկզբունքներ կը ներկայանան զայն լուծելու համար : Բայց պէտք է անպակաս ընտրել այն իւր միակ ուղղութիւնը որ փոքրը ազգերու պատմական փորձառութիւնէն կը բղիխ ուղղակի : Այսպէս , ենթադրելով իսկ որ առաջին պայմանը ի ձեռքն ունինք , դարձեալ խնդրին լուծումը ապահովեալ չէ : Ապացոյց՝ Բոլոնիոյ ապստամբութիւնը : Ընդհակառակը՝ երկրորդ պայմանը կը գերատիրէ առաջինը և միակ անհրաժեշտը կը ներկայանայ : Ապացոյց՝ Պալքանեան ազգութեանց ապստամբութիւնը : Ահաւասիկ ինչու համար չափազանց համարիտ չ'են՝ գանձեր անսք աբ կը յաւանան Եւրոպայէն յուսալ մեր փրկութիւնը :

Հետևաբար պէտք է ընդունիլ որ տիրելի և կարծիքին անվերապահ համակրութիւնը կը կազմէ իրական ու անհրա-

ժեշտ տարրը վերև ակնարկուած պայմանին ստեղծման : Ամբողջ Եւրոպայի անասման ու շերտ համակրութիւնը Պոետներուն համար ամենադոյզն դրական օգտակարութեամբ մը չ'իջարգմանուեցաւ : ճիշտ է սակայն : Բայց պէտք է ինկատի առնել որ Մեծն-Բրիտանիոյ հետ էր որ պիտի չափուէր այն Պետութիւնը որ պիտի համարձակէր միջամտութեան յանդուզն քայլին նախաձեռնարկել — այսինքն աշխարհիս ամենահզօր ծովային կայսրութեան դէմ : Հոս ընդհակառակը խնդիրը թուրքիոյ վերայ է — այսինքն երկրի մը թէպէտ զինւորական կենսականութենէ զուրկ չ'է՝ սակայն ի վիճակի չէ յարստեօրէն ու յաջողաբար դիմագրելու մեծ պետութեան մը դէմ , ևս նուազ անբոլոր Եւրոպայի :

Այն օրը ուրեմն որ , ստացեալ իրողութիւն մը պիտի ըլլայ լուծումը կ'Եւրոպական կարծիքին համակրութիւնը մեզ համար , խնդրին հաւասարութեանց արաջիկ անմանօրք գտնուած պէտք է համարել :

Այս առաջին արդիւնքին տիրանալու համար այնքան աւելի եռանդուն փութկտութիւն մը պէտք է գործածուի , որքան արագօրէն ժամանակը անդուծու անտարբեր՝ մտացումի սպունդը կը սահեցնէ հայրենիքին արիւնայիլ յիշատակներուն վրայ : Խզի խայթը յօժարակամ կը լռէ երբ երևակայութեան մէջ կը դազուին յաճելի ոճրին ուրուականները : Արդէն հինգ երկար տարիներ անցան անկէջ ի վեր և կուտորածներու վաղորդային իսկ Եւրոպան կը հարցնէր հանգարտ սրտով . բայց ո՞ր են հերուան ձիւները . . . Ահաւարկելով Ստուենի շարդին , Հանթթոն կը գրէր թէ , առանք միջադէպներ են որոնք ամեն օր կը պատահին Անատոլիոյ մէջ . ձեռք կուգայ և ձիւնը իր տակ ամեն քան կը թաղէ . . . :

Բայց մտաւանդ այն ճիգերը որ այս ուղղութեամբ պիտի կատարուին , հարկ է որ կեդրոնանան Յրանսական հանրային կարծիքին լուսաւորման գործին վրայ : Ճշմարիտ է որ այս մեծ ու վեհանձն ազգը 70 էն ի վեր դադարած է այլ ևս աշխարհի քաղաքականութեան մէջ պերական գիւրք մը գրաւելու . և կարծես Եւրոպայի շահախնդիր լքումը իր ձախողումը իր տուր օրերուն մէջ՝ անոր անգութ ըլլալ ուսոյց , հակառակօրէն իր սղնուագոյն առնդութեանց : Բայց դեռ կարող է դիւանագիտական հողին վրայ խաղալ իրականապէս նպատաւոր դեր մը Հայկական Խնդրին առթիւ : Այսօր անվիճելի իրողութիւն մ'է թէ առանց Թուսիոյ կամքին — այսինքն

Հայաստանի դրացի աշխարհիս ամենահզօր զինւորական կայսրութեան — բացարձակապէս անհնար է հայերու ճակատագրին նպաստաւոր վճարումը :

Անդիոյ համակրութիւնը արդէն ըստացուած է : Միւս կողմէն , ոչինչ կ'ապացուցանէ թէ վարչական առանձնաշնորհումները հայոց համար անհաշտելի են Չարերու կայսրութեան շահերուն հետ : Ընդհակառակը , իրերու արդի կազմութեան մէջ , անսք պիտի կազմէին տեսակ մը modusviviendi մը : Ատով , Արեւելեան խնդրին պարբերական բացվաւաններուն պատճառներէն մին պիտի վերնար և Թուսիոյ համար կարելի պիտի ըլլար իր ամբողջ ուժերը և ուշադրութիւնը նուիրել Մայրագոյն Արեւելեան վիթխարի դիտումներուն իրականացման : Արդ ո՞վ է այն պետութիւնը որ պիտի կրնայ համոզել Թուսիան այս կետին վրայ և նոյն իսկ տեսակ մը բարոյական ճնշում գործել անոր վրայ , եթէ ոչ իր դաշնակիցը՝ Յրանսան : Բայց ասկից , կարևոր է որ հաշուի առնուի այն շարժումը որ սկսած է գրծուել հայկական դատին դէմ ուժով՝ հոսանք մը ստեղծելու նպատակով : Եւրոպական թուրքիա կոչուած կուսակցութեան է որ կակնարկեմ : Հոս նպատակ չ'ունիմք ընդհանրապէս կատարելու անոնց ծրագրին վրայ : Բայց հիմնուելով պետերուն արարքներուն վրայ՝ կարելի է ի յատաշարուն մերժել զայն : Այս կուսակցութեան գործունէութիւնը էականապէս ժխտական է : Ահմէտ Բիգայի ճիգերը կը թուին սահմանափակուած ըլլալ միայն Հայկական համակրութիւնները թունաւորելու տրիտեր գործին մէջ :

Ի՞նչ վեհ գործ ուրեմն քան այն գործը որ կը միակ վերակենդանացնել քաղաքակիրթ աշխարհի խզմին առջև արիւնի պատմութիւնը զոր Համիտական բռնակալութեան սուրը գրեց Հայաստանի աշխատաւոր դաշտերուն վրայ : Ի՞նչ կորովի ու գերազանցապէս բարոյական գործ ուրեմն քան այն որ անապագօրէն՝ յարստեօրէն կը ձողկէ դիւանագէտներուն անագորոյն ու անձկամիտ անտարբերութիւնը : Բայց մեզ նուանք ի՞նչ օգտակար գործ քան այն որ կը ձգտի ապացուցանել առաջնորդող գաղափարներուն թէ իսկական հակառակութիւն չ'իկայ իր շահերուն և ժողովուրդի մը ազատագրութեան միջև , և հաւակրութիւններ զարթուցանել ժողովրդական խաւերու մէջ , առանց սակայն անոր գասակարգային խնդիրներուն հետ շփոթելու մեր գատը :

Այս ամենէն կը հետեւի որ Փրօ-Արմէ- նիա, ֆրանսացիներու կողմէ խմբագրուած միակ հայապաշտպան հանգէսը — դժուար ու ծանր պաշտօն մըն է ստանձնած ։ Տա- ղանդը և բարոյական ուժը չէ որ կը պակ- սի անշուշտ ազնիւ ու յարգելի Բիէր Գիյ- եառին որ ոչ միայն ստանձնած է հանգէ- սին խմբագրութեան ամբողջ հողը այլ ինչ- պէս կ'ապահովցնեն՝ լափլիզող գործունէ- ութիւն մը ցոյց կուտայ, բանակցութեանց մէջ մտնելով եւրոպացի ազատական դիւա- նագէտներուն հետ, որպէսզի հայկական խնդիրը խորհրդարանական ճամբով ևս վեր- արժարժուի ։ Բայց հարկ է ըսել որ ինչպէս ամեն բանի մէջ հոս ալ վերջին բառը « դը- ռամ » ինն է ։ Հարկ է ըսել որ առանց ըստ- ուար բաժանորդագրութեան մը թերթին գոյութիւնը կարելի չէ ապահովել մշտա- կանօրէն ։

Ուստի անտեղի չը պիտի ըլլար անգամ մը ևս յայտարարել որ բոլոր արտասահ- մանի հայերուն վրայ կը ծանրանայ թերթը քաջալերելու պարտականութիւնը ։ Եւ ա- նոնք որ կը չքմեղեն վերենք թէ չեն հաս- կրնար զայն, չեն կրնար արդարանալ իրենց ձեռնպահութեան մէջ ։ Արդէն նախաձեռ- նութեանց հայրենիքէն՝ Ամերիկայէն՝ առա- ջին օրինակը տրուած է ։ Փափաքելի է որ եղիպտոհայերն ալ մրցէին Ամերիկահայոց եռանդին հետ և թէ Գահիրէի թէ Աղէք- սանդրիոյ մէջ Յանձնաժողով մը կազմուէր պատուաւոր և չեզոք անձնաւոր ընդհանուր հանգանակութիւն մը բանալու համար ինը- պատ Փրօ-Արմէնիայի ։ Այս պարտականու- թիւնը գլխաւորապէս կը ծանրանայ հա- ռուստներուն վրայ որոնք մատի վրայ չէ որ կը համրուին Նեղոսի հովտին մէջ ։

Այն ազնիւ եռանդը և ձեռներէցու- թիւնը որուն ապացոյցս տուած է արդէն Գահիրէի և Աղէքսանդրիոյ երիտասարդու- թիւնը այս կարգի գործերուն մէջ — ինչ- պէս ի նպաստ Ազրաւ . ընկերութեան (Գա- հիրէ և Աղէքսանդրիա) տրուած ներկայա- ցումները, Անաթոլի ֆրանսայի գայած պատգամաւորութիւնները և այլն իրաւունք կուտան յուսալու թէ ներկայ առաջարկու- թիւնն անգործագրելի և ցնորային իրերու կարգը չ'պիտի գասուի ։

Այլապէս արժանի պիտի ըլլայինք մեզ ցոյց տրուած եւրոպական անտարբերու- թեան ։ Մենք մեզի օգնենք, որպէսզի եւ- ռոպա օգնէ մեզի ։

ԱՐՏՕ

ՉԱՐԺԵՐ

« Արշալոյս » ի 160 թիւը քիչ մը ուշ բնձ հասաւ, եթէ ոչ այս խնդիրը ասկէ առաջ գոց- ուած կ'ըլլար ։ Տը Ուէթի մասին այսչափ գրել և և վիճաբանիլ արդարեւ չ'արժեք ։ Այս մի քա- նի տողերն ալ ըրտ պիտի չ'տեսնային և թէ նը- պատակը չ'ունենայինք այս ժամանակավաճառ վիճաբանութիւնը վերջացնելու ։ Մենք չենք տեսներ Տը Ուէթի ցարգ կատարած գործերուն մէջ արտաքոյ կարգի սխրագործութիւններ, մինչ Պ. Լեւոն կը կարծէ, անշուշտ ներշնչու- չուած ըլլալով հակաբրիտանական և ֆրանսա- կան թերթերէ, թէ անիկա « տարեգրութեանց մէջ նմանը չ'ունենուած նահանջ » ներով, « չու- ներով և հակաշարժումներով » « տիեզերական անուն » մը հանած է և « Նարոյէտն ըսուելու արժանի է » ։ Պր. Լեւոն շատ լաւ հմուտ պէտք է ըլլայ պատերազմական տարեգրութեանց այս-

պիսի յանդուգն դիտողութիւն մը ընելու համար այնպիսի անհասի մը նկատմամբ որ տակաւին հաւասար պայմաններու տակ կ'անոնաւոր ճա- կատամարտ մը չէ մղած և որուն բոլոր զին- ւորական գործողութիւնները, իր իսկ խօսքե- րովը, փախուսաներէ և հաշտանքէ խոյս տա- լէ, կ'առաւարակէ իր արտակալէ և չ'ապաստուած տեղեր գաղտագողի ռաւմեր կատարելէ, կը բաղ- կանան ։ Ո՛չ մէկին մնտ հասցուցած չ'ըլլար Տը Ուէթի պատուական շատագովը իրին համար այսպիսի կուռք մը ընտրելովը ։ Մեր կողմէն բնաւ առարկութիւն չունինք և կը շնորհաւո- րենք զինքը իր ընտրութեանը համար ։ Միայն կը խնդրենք որ մեզմէ ալ չ'պահանջէ նոյն եր- կրպագութիւնը ։

Կրկին չ'արժեք պատասխանել այն դիտող- ութեան թէ « 400 միլիոննոց հոկայ մը 300 հազարնոց գաճաճի մը հետ կը մեղամարտի » ։ որովհետեւ այնպէս չէ ։ Չարմանալի է որ այս- պիսի տարրական իրողութիւն մը դեռ ըմբռու- նուած չէ ։ Չորս միլիոն ժողովուրդին միայն 200 հազար զինուորներէ բաղկացած բանակն է որ կը պարերազմի իրապէս 300 հազարէ բաղ- կացած բանակի մը հետ ։ որովհետեւ Հոլանտա- կան ամբողջ ժողովուրդը կը պատերազմի և յաճախ իգական սեռը աւելի ազդու դերեր կը կատարէ ։ Բացի ասկէ Բրիտանական բանակին հազու թէ մէկ չորրորդը կուրին մէջ ուղղակի բաժին ունի ։ մնացեալը ցրուած են այդ ըն- դարձակ երկրին ամեն կողմերը և հարիւրաւոր դիւղեր և քաղաքներ կը պատսպարեն ։ Անգ- ղիացեաց էն ոխերիմ հակառակորդները իսկ ըն- գունած են թէ Բրիտանական աղբիւրէ ելած լուրերը միշտ իրողութիւնը ներկայացուցած են, առանց իրենց ի նպաստ չափազանցելու ։ Այս անխոնհմութեան արդիւնքը յաճախ իրենց մտաւարներ կղած է ։ բայց ամեն պարագայի տակ ճշմարտութիւնը չեն սքողած ։ Պ. Լեւոն ազատ է իր ընտրած կերպովը գրելու ։ միթէ գրելը իւր չէ ։

Անգղիացիներուն վերագրուած անգթու- թեան դէպքը մեզ կը յիշեցնէ թրքական խճ- դութիւնները ։ Եթէ այդ պատմութիւնը ի- յուս տեղի ունեցեր է, (որ շատ կ'սկսած էի է Հոլանտական աղբիւրէ եկած ըլլալուն համար) ոճրագործները պէտք է որ պատժուին ։ այդչափ մեծ բանակի մը մէջ անագորոյն գաղտնիք քրտ- նուելը շատ հաւանական է ։ մենք չենք կրնար ըսել անոնց համար ինչ որ Պ. Յօգուածագիրը կ'ըսէ Պօէրներուն նկատմամբ թէ քրիստոնեայ ժողովուրդ մը ըլլալուն համար անգթութիւնէ զերծ են ։ Սակայն տարբերութիւնը սա է երկու պատմութիւններուն մէջ որ մինչ վերջինը ան- հատական դէպք մըն է, առաջինը ի պաշտօնէ « վեժ սպանդակներն » կողմէ կատարուած է ։

Ժամանակնիս չ'վատնենք ։ Տը Ուէթ չ'ար- ժեք ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԳԵՐՄԱՆԻԱ

ՎԻԼՀԵԼՄ Բ. ԿԱՅՐԸ . — Փառի նու- վելի մէջ կը կարդանք ։ Գործակալութեան նրն Պէրլինգէն կը հեռագրեն թէ՛ երէկ (կե- րակի) Վիլհելմ կայսրը ընդունած է Բրու- սական Սենեկին Գիւանը, որու անդամնե- րուն խօսած միջոցին, Պրէմի մէջ կատար- ուած յարձակման վրայ խօսելով ըսեր է թէ՛ երիտասարդութիւնը անբարոյականացեր է ։ և թէ՛ այդ յարձակման պատասխանա- տու է բոլոր գերման ժողովուրդը, առանց բացառութեան ։

Կայսեր այս խօսքերը գէշ ազդեցու- թիւն ըրած են քաղաքական շրջաններու մէջ, որոնք կայսեր ըսածները հայհոյան- քի տեղ առած են, ուղղուած բոլոր գեր- ման ժողովուրդին ։

Կայսրը ըսած է դարձեալ թէ՛ ազատա- կան թերթերը չափ յախուռն կերպով կը քննադատեն կառավարութեան գործերը և այդ մասին իւր գծագրութիւնն է յայտնար ։ Վերջապէս կայսրը յայտարարեր է թէ՛ Վիլհելմ Առաջին կայսեր մահէն յետոյ, կայսերական թագին վարկը բաւականին ինկեր է ։ Բան մը՝ որ ոչ կայսեր և ոչ ալ պետութեան գործերը վարող անձանց պատիւ կը բերէ ։

ԱՐԱՌԱ

Լուր կը շրջի թէ՛ Բ. Դուռը իր դրա- մական կացութիւնը բարելաւելու համար, որոշած է իր կարմիր ծովու ստացուածք- ները ցամաքային պետութեան մը շահա- գործմանը յանձնել ։ կը կարծուի թէ՛ այդ պետութիւնը կամ Գերմանիա և կամ Ֆը- րանսա պիտի ըլլայ ։

Թուրք կառավարութիւնը պարտաւոր պիտի ըլլայ ուրեմն երկայն պայմանագիր մը կնքել, առանձնաշնորհուած տեղերու գերիշխանութիւնը իրեն վերապահել կարե- նալու համար ։

ԵՐԿԱԹՈՒՂԻՈՅ ՊԱՐԳԵՒԻ . — Օսմանեան երկաթուղոյ վիճակահանութեան առաջին պարզու շահող թիւն է 943, 625 ։

Հ Ն Ո Ւ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Կ. Պօլիս 29 Մարտ . — Սուլթանին կե- նացը դէմ մեծ դաւադրութիւն մը գտնը- ուած է ։ Դաւադիրները երիտասարդ թուր- քեր և պաշտօնակալներ են ։

Բազմաթիւ ձերբակալութիւններ կա՞ծ տարուած են ։

Բրէթօրիա 29 Մարտ . — Սաստիկ կը- ուի մը ունեցանք Հարթէլէսթօնթայնի մօտ Տրլարէյի բանակին հետ՝ իր վէնթէրս- տորքի պարտութեանէն առաջ ։ Այս կուռոյ մէջ Իմքերիայ շայք Հօրմները շատ կորուստ ունեցած են ։ երկու սպայ, հինգ զինուոր սպանուած, և երեք սպայ 13 զինուոր վի- բաւորուած են ։ Պօէրները ծանր կորուստ- ներ ունեցած և օգնալորքերը ժամանել- լուն պէս նահանջած են ։

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԵՍ ԸՐԻ ԳՈՒՐ ՄԻ ԸՆԵՐ

(ԲԱՆՏԻ ՅԵՇԱՍԱԿ)

(Շարկ . Լախորդ քիւէն և վերջ)

— 1006 —

Մեր ընկերակիցներէն մին, երկնառա- բանաստեղծ մը՝ 37 տունից բաղկացեալ ոտա- նաւորով մը, ներքողներ հիւսած էր նորին Վե- հափառութեան՝ անսահման բարեացակամու- թիւնը գրուատող յուզիչ յանդերով, իր այժ- շնորհքին համար որով՝ մեզի վայելել կուտա- անվարձ պանդակի մը հաճոյքը, հանգստեա՞ծ թոշակի մը հետ ։ և ամեն առաւօտ ու. միջ- նոյն բանաստեղծութիւնը մեր աղօթքներու՞ խաւնուած խմբովին կ'երգուէր, որուն թերթ- ազնոող մեղեդիները ախորժալուր՝ ոլբուկելով մեծ խալիֆայի մեղաւտանին հոկայ պարիսպնե- րուն շուրջը, մեղմօրէն կը սողակէին ներս՝ մինչև անոր ականջները ։

Հակառակ դասակ մը զրպարտողներու՞ մա- բասանութեանց և վկայութեանց՝ ոչինչ հաս- տատուեցաւ մեր վրայ, և ոչ ալ մնասակար գրութիւն մը ձեռք անցուցած էին կատարուած մանրակրկիտ խուզարկութեանց միջոցին, ու- րեմն անպարտ էինք ։

Քէյթթաուն 29 Մարտ . — Հալարապետ Մըլինս ամսոյս 20 ին Ուէթ — գօմօթի մօտ կտ մշած է Շէֆերի գօմանտօն . 16 Պօէր սպաննուած և շատեր ալ վիրաւորուած են :

Ս . Բէթէրսպուրկ 29 Մարտ . — Չարը երկու օրէ ի վեր տկար է . Ն . Վեհափառութիւնը շրջանի հիւանդութենէ կը տառապի :

Սօֆիա 29 Մարտ . — Տէրտինանտ իշխանը և իր տղան Պօրիս , որ ապաքինման ճամբուն մէջ են . Նիս մեկնեցան :

Սէլանիկ 30 Մարտ . — Մինչև հիմա մակերանական խռովութեանց պատճառաւ ձերբակալուող Պուլկարնէրու թիւը 94 ի կը հասնի . ասոնք ապրիլ ամսոյ մէջերը պիտի դատուին :

Վիէննա 31 Մարտ . — Հայաստանի մէջ Գիւրտերէն գործուած վայրագութեանց լուրերը ցաւազին տպաստութիւն մը ըրած են :

Սինէք գիւղը հիմա աւերակ է . մահու ռնէ ազատուող բնակիչները Վանի Հիւպատոսարանի պաշտպանութեան տակ խմբովին կը գաղթեն իրենց հայրենիքէն :

Մարսէյլ 31 Մարտ . — Բարիզէն եկող պատուիրակներուն տեղեկագիրը լսելէ յետոյ , 2000 գործաւորներ քուէարկած են գործադուլին շարունակութիւնը :

Լոնտոն 31 Մարտ . — Պօէրները Ժօհաննէսպուրկի և Բրէթորիայի միջև ամսոյս 30 ի դիշերը , կառախուսմը մը գօժէն չեղեցուցած են . մարդու կորուստ չ'կայ . միայն պահ մը անցուդարձերը ընդհատուած են : Քրուիցինկէր հրամանատարին շարժականութիւնը շատ զարմանալի է . Օրանժ գետէն Զիւրպէրկ դէպի ետ կամ առաջ կ'երթայ միշտ իր գօմանտօն այնպիսի հրաշալի կերպով ցրուելով ու ամփոփելով , որ միշտ կը յաջողի իր ետևէն զրկուած գունդերէն խուսափել :

Վիէննա 1 Ապրիլ . — Սէլանիկի Պուլկարաց գաղտնավարութիւնը նպաստաւոր կերպով կը քննադատուի հոս . Լրագրաց մեծ մասը կը գովեն Օսմանեան իշխանութեանց բռնած դիրքը :

Սակայն կառավարութիւնը կը շարունակէ իր գործը , հեռզնետ բերելով անմեղներու բազմութիւն մը , այնպէս որ վերջապէս ստիպուեցանք բողոք բառնալ տեղւորն անձկութեանը մասին :

Ինչ օգուտ « Նազըմ » ը եւ « Հիւանի » ն մեր բողոքին գոհացում տալու համար նոր միջոցի մը դիմած էին , որոշելով գաւառացիները աքսորել իրենց տեղերը , եւ մենք մեր մտքին մէջ ունէինք արդէն այդ շարագուշակ մտածումը , որուն ժամն ալ հասած է եղեր , նախապէս պատրաստուած 30 ի չափ անուններու ցանկով մը հետզհետէ կ'օչուեցան նշանակեալները , որոնց զէմքին վրայ վայրկենապէս գծուած երկիւղին եւ սարսափին մենք ալ կը մասնակցէինք , սենսելով անոնց ձեռքերը անցուելիք երկաթեայ շարժուող ձեռնակապերը :

Գիւղումով թէ նպատակաւ աքսորի բաժին չ'նշու ինձ հետ 4-5 վիճակակիցներու , ուստի փութալ պէտք էր մեր քով գտնուած մինչև վերջին լուծման , այդ դժբաղդութեան գոհերուն բաժնիլու :

Անոնց մեկնելուն չորրորդ դիշերը բանտապահին խոստովանելու մեղ կ'ազգարարէր հետեւեալը , « ուրախ սիգ ալթի քիշինիգ էքմէշինիգի ալուպ տըլարը չըգընդ » , « ծօ' դուք վեց հոգիներդ հացերդ առնելով դուքս ելէք » այդ միջոցին մեր առջև կը ցցուէր երկու բան , ար-

Լոնտոն 1 Ապրիլ . — Տը Ուէթ և Պօթիա իրարու կը միանան :

Կ . Պօլիս 2 Ապրիլ . — Իւր պատասխան Պօլսոյ Պուլկար գործակալութեան դիմումներուն՝ Բ . Գուռը յայտարարած է թէ որոշած է անխնայօրէն շարունակել Մակեդոնիոյ մէջ խռովարարաց հալածումը :

ՏԱՐՈՐԻՆԱԿ ԵՆՆԻԱՐՆՈՒԹԻՒՆ

Ալմատէնի անդիկի հանքերուն մէջ ծառայող գործաւորի մը կինը տասը ամիս առաջ ծնած էր արդէն երեք երեխայ . անցեալ շաբթու ալ հինգ հատը մէկէն ծնաւ ! և զարմանալին այն է որ հինգն ալ շատ լաւ առողջ վիճակի մէջ են կ'ըսեն ! ! :

Ալ մակէ վերջը ինչպէս կարելի է ըսել թէ ֆրանսայի ժողովուրդը չ'աճիր , քանի որ կիները սկսած են երեք հինգ երեխայ մէկէն աշխարհք բերել :

Ա Զ Դ

ԱՂԲԱՏԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Գահիքէի

Աղքատախնամ ընկերութեան Ընդհ. ժողովը պիտի գումարուի յառաջիկայ կիրակէ , 7 Ապրիլ 1901 , կէս օրէ յառաջ , եկեղեցական արարողութենէ անմիջապէս յետոյ ազգային մանկապարտէզի սրահին մէջ :

Օրակարգ

Միամեայ հաշուետուութիւն Գործ . ժողովոյ :

Իրանս կը հաւատայ թէ Պատ . անդամք պիտի փութան ներկայ ըլլալ սոյն նստին իրենց ընկերական պարտականութիւնը կատարելու համար . մանաւանդ պէտք է քաջ համոզուին թէ ամբողջ տարեշրջանի մը մէջ , իրենց մի քանի վայրկեաններու զոհողութեամբ միայն ժողովը պիտի կրնայ մեծամասնութիւն ունենալ , ինչ որ անհրաժեշտ է տրուելիք որոշմանց վաւերական

ձակում , կամ աքսոր , ձակատագրերնու համակերպած , դուքս ելլելով ոտականներէ առաջնորդուեցանք պաշտօնատան սանգուխներուն տակ գտնուած սենեակ մը , ուր 5 գօմիւթերն մտնի մը ազատ լսյսերուն տակ , մեր վրայ կը թողէին դժոխքը իր սաստաններով տեսած ըլլալու տպաւորութիւնը :

Գօմիւթերնէն մին որ գրելով զբաղած էր , թողով իր գործը սկսաւ խրատներու շարք մը տեղացնել մեր վրին , Սուլթանի եւ իր կառավարութեան հաւատարիմ մտալու յաւիտենական բանաձեւներով . նոյն միջոցին սակայն մեր հետ գտնուող անփորձ պատանիի մը քըրքիչէն քիչ մնաց որ դարձեալ փոխադրուէինք հոն՝ ուրկէ որ եկած էինք . բարեբաղդաբար վրայ հասաւ երկրորդի մը միջամտութիւնը՝ եւ երաշխաւորութիւններով ազատուած էինք :

Արձակուելէ վերջ՝ շատ նորութիւններ տեսանք , ոտականներու ուսերէն խաչածեւ ձրգուած ժապաւէնները կուրծքերէն եւ քամակներէն բոլորելով թեւերուն տակ կը վերջանային որոնց ձախակողմերը վեցհարուածներ խկ աջակողմերը սուրբեր կախած կը փայլէին :

Մի օր Ս . Ա . ի այցելութիւնը կ'ընդունէի՝ շատ մը խօսակցութիւններէ վերջ՝ ինձմէ խնդրեց իրեն համար տասը ոսկւոյ գումար մը գանել . բացասական պատասխանիս վրայ , յետոյ կը զղջաւ ըսելով մեկնեցաւ :

ըլլալուն . առանց այդ մեծամասնութեան ներկայ եղող անդամներն ալ անգործութեան պիտի դատապարտուին :

Ի Դիմաց դիւանի ընդհ. ժողովոյ Աղքատախնամ Ընկերութեան

Ատենադպիր Բ . Ատենապետ Հ . Կ . Պէլ'Պէլ'ԵԱՆ Լ . Արի'Պի'Պի'Պի'Պի'Պի' 2 Ապրիլ 1901 Գահիքէ

ՏՕՔԹ . ՔՕՐՆՔԵԼՏ

Վ.ԿԱՅԵԱԼ ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ

Նախկին Ներքին Բժիշկ Վիէննայի դըլխաւոր հիւանդանոցներուն . Մասնագէտ միզանքային հիւանդութեանց , Գաղղիական սխտի , կոկորդի , քիթի և բերնի հիւանդութեանց :

Ամէկ օր հիւանդ կ'ընդունի կէս օրէ առաջ՝ Կամր 10 և 12 , իսկ կէս օրէ վերջը ժամը 3 և 5 , իր տունը Շէրիֆ փաշա փողոց , ԱՂԵՔՍԱՆԻՊԻԱ :

ՆԱՄԱԿ ՓԱՐԻՁԵՆ

Փարիզ 25 Մարտ 1901

ԲԱՐԵԳՈՐԵԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՐԵՎԱՆԻԸ

Մեր անցեալ թղթակցութեանց միոյն մէջ յայտարարած էինք թէ Փարիզի հայոց Բարեգ . Ընկերութիւնը Երեւոյթ - Պարահանդէս մը տալու է ներկայ ամսոյս 23 ինձ Այդ երեկոյթը տեղի ունեցաւ շաբաթ երեկոյ (Մարտ 23 Ն . Տ .) , Փարիզի ամենաչքեղ սրահներէն՝ Սալ տէզ Էնժէնիէօր Սիվիլի մէջ . Սրահին ընդարձակ դահլիճը , նախասրահը , մուտքը զարգարուած էին գորգերով և տունկերով ու ծաղիկներով , պատերը և գետինը ծածկուած էին արեւելեան հիանալի գորգերով , զորս հոն տեղափոխած և զետեղած էին Քէլէկեան և Ճէվահիրճեան վաճառատուններէն : Սրահը այնպէս լաւ և արևելեան այնպիսի նուրբ

Հրէշին թշնամանքը չ'ուշացաւ սակայն , այս անգամ գոնը եղբայրս էր , որուն ազատումը ձեռք բերելու համար , կաշառքի հրաշագործութեանը պիմել հարկ եղաւ : Վերջապէս Հայ միջնորդ մը ձեռամբ սակարկութիւնը վերջացած եւ 15 ոսկւոյ կաշառքը իր գերը կատարած էր :

Նոյն ժամանակ Պօլիս գոյութիւն ունեցող յեղափոխական մարմինը , նկատելով որ Ս . Ա . իր պիղծ ձեռքերով բազմաթիւ անմեղ հայերու արիւնները քամած՝ եւ շատ մը ընտանիքներ թշուառացուցած էր , եւ հակառակ իրեն եղած քանիցս ազգարարութեանց միշտ անդրդուելի մնացած էր , եւ կը շարունակէր ի գործ դնել իր հրէշային յղացումները , միաձայն որոշումով մահուան դատապարտեց զայն :

Գործադրութիւնը չէր ուշացած՝ անբեկիչ ներու սուրն ու գնդակը ուշի ուշով հետեւած էին անոր , եւ Ղալաթիոյ « գաբու իչի համա » ին կողմնակի փողոցներէն միոյն մէջ , սխմար ոտականութեան քիթի տակ , արի հայրէնասէրին սուրը , հրէշին սեւ սիրտը մխուշով իր սուրբ նպատակին հասած էր :

Դաւաճանը իր զգուշի հոգին սազայէլին յանձնած էր խոստովանանքի եւ պաղատանքի հետեւեալ բացագանչութեամբ .

Սո ըրի գուք մի ընէք :

ԳՈՌԱԿ-ԵՓՐԱՏ

ճաշակով մը զարգարուած է, որ տեղւոյն սովորական յոճախորդները ապշած կը բա...

Սրեկոյեան ժամը 8 1/2 էն սկսած խուսարն բազմութիւն մը հաւաքուիլ սկսաւ ընդարձակ դահլիճին մէջ, ժամը մօտ 10 ին...

Ժամը 9 1/2 ին երեկոյթը սկսաւ և տեսց յատարապէս ծ ժամ: Լսուեցան յայտնի արքիւսներ, որոց մէջէն յիշենք Պ. Միւսէ-Միւլլի, Թրանսական թատրոնէն, Պ. Խամօ՝ Օտէնէն, Տիլին Վէպէ՝ նոյնպէս Օտէնէ թատրոնէն:

Այստեղ լսուեցան նաև երեք Հայ արքիւսներ ալ, որոնք էին ՊՊ. Ամիրան՝ երգիչ, որուն վրայ մենք արդէն քանի մը անգամ խօսած ենք: Ելմամբ դաշնակահար և կիւլլէնկ՝ ողբերգակ: Աւելորդ է ըսել թէ ամենքն ալ կատարեալ յաջողութիւն ունեցան իրենց դերին մէջ:

Վերջապէս Կոնցերտի մասը որ 16 կրտսրներէ կը բաղկանար վերջնապէս կէս դիշերը կէս ժամ անցած: Անմիջապէս յետոյ սկսաւ պարահանդէսը տասներկու նոսազածունքու քաջամարտիկներու և տեսց մինչև առաւօտեան ժամը 5 ր: Պարուներու մէջ մեծ ոգևորութիւն մը կը տիրէր մինչև վերջին վայրկեանը:

Բաւական լաւ գումար մը հատոյթն և զաւ այս երեկոյթին: այնպէս կը կարծենք թէ բոլոր ծախքերը գուրս հանելէն յետոյ առնուազն 1500 ֆր: շահ մը կը մնայ Թարգործական Ընկերութեան: Երանելի թէ մեր կարծածէն շատ աւելի լինի հասոյթը, որովհետև Փարիզի այդ միակ կանգուն Ընկերութիւնը շատ պէտք ունի դրամի իրենց զինով հարիւրաւոր ազգատ հայերու օգնութեան գալու համար:

Մ. Ս. ԳԱԻԹ ԲԷԿ

ՏՀԻ ՄԻԶՈՒԱԼ ԼԱՅՑ
ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԻՆ ՀԱՐՈՒՅՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇՄԻՈՐԵԱԼ ԳՐԱՄԱԳՆՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:
 Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց դուստրած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ այսարհի ուրիշ սրէ է ընկերութենէ մէկ միլիար աւելի է:
 Ս. ԼԷՈՐՆԻՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երայխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:
 ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻԶՈՆ գլխաւոր գործախատար յ'Ազգ. քսանդրիա:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԵՆԸ ՊԱՏՈՒԹՅԱՆ
 — ԳԷՈՐԳ ԵԿԱԻՕՑ —

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալաքի փողոց. Խաղէտարի սեփականութիւն, Պրիսթլ Սթիլ Տիշը դիմաց, Իաֆէ Տը Լա Պուրսի կեց:

Հին եՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԵՉ 6500 ՄԱՍԵԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐՔ երն են և ստուգմէ մինչև ցարդ 17.000.000 ծախուած է ր

400 է աւելի վիտրաբաներով և մեքայնեով վարձատրուած, Երաշխատեալ մեքենաներ,

ԱՄԵՆԻՆ ՄԵՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ
 Փարիզի 1900 ի Տիլգերախալս արուեստանախիսի մէջ ստացած է:

ՀԱՊՈՒՅՑԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻԿԻՆ
 ՀԱՅՍՏԱՅԻՉ ԱՆԿՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
 ԵՒ ԲԱՍՄԱՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ
 ՀԱՅՍՏԱՅԻՉ Ե. Բ. ԱՅԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշագրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ Ի յասկանշիլն:

ԳԻՆ ԶԱՓԱՒՈՐ

Ձրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԵՐ մեքենայից համար, յաճախորդաց տուներուն մէջ:
 Վճարմանց Դիւրութիւն
 Փոխանակութիւնէն մեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից




ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՎԱՐՔԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ
 ԿԻՐԱԿԻ 31 ՄԱՐՏ 1901

6711	4529	7534	7958	977	1008
1044	1843	1891	2019	2512	2758
3466	3944	4054	4312	4390	4450
4664	4827	4953	5137	5322	5683
6027	7348	7392	7969	8601	8728

ՀՅԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆ
 ԿԻՐԱԿԻ 31 ՄԱՐՏ 1901

1954	677	294	1649	9577	486
1392	1428	1888	1951	2412	2434
2805	2965	3615	3810	5459	5871
6378	7127	7482	7597	7906	8275
	8325	8605	9253		

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ



G. DER ABRAHAMIAN
Egyptian Cigarettes Manufacturer
 PURVEYOR TO HIS EXC
 SIR ALFRED MILNER
 G.C.M.G.K.C.B
 GOVERNOR OF CAPE COLONY
 and H.M.'s High Commissioner
 for South AFRICA

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
 ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ԱՐՇԱԼՈՅՍԻ
 ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՐԸ
 Օտեսնիյի դեղատանին ղիմացի փողոցին մէջ:

Ժողովրդական Տպարանին մէջ կը պատրաստուին:

Այցելատեալ, Երաշխատեալներ, Գիտիւ, Հրախազեր, Մահաբիւն, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմար և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւններ կը վաճառուին հետևեալ գրքերն:

1. ԲՆԱՇԻԱՐ ՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ Ի Ա. Ե. Բ. պրակներն:
2. ՈՐԲՈՒՆԻ որոյ ի Թուրքիա մուտքը, ինչպէս կը լսենք, արգիլուած է:
3. ՀԱԻԱՔԱՇՈՑ հայոց ժողովրդական երգերու: